



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ  
ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով համայնք  
ՀՀ, Արարատի մարզ, գ. Դիմիտրով, (094)730000, (093)991354, dimitrov-gyuxapetaran@mail.ru.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

26 սեպտեմբերի 2018 թվականի N 28

**ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ  
26-Ի ԹԻՎ 11 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Առաջնորդվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջով, համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ է.

Հաստատել Դիմիտրով համայնքի ավագանու 2018 թվականի սեպտեմբերի 26-ի թիվ 11 հերթական նստի հետևյալ օրակարգը.

1. Գույք օտարելու մասին:
2. Համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 5-ի N 35-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին:
3. Գույքահարկից ազատելու մասին:

Կողմ -7

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ *Կողմ Ազատի*

ԻՎԱՆՈՎԱ ԱՌԴԱ *Կողմ Ազատի*

ԽԱԶԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ *Կողմ Ազատի*

ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ *Կողմ Ազատի*

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՅԱՆԵ *Կողմ Ազատի*

ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ *Կողմ' Ազատի*

ՍՈՒՄԲԱԹՅԱՆ ՆՎԱՐԴ *Կողմ ժես*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԻՐՈՆԱՆՈՎ



ԱՐՄԱՆ



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով համայնք  
ՀՀ, Արարատի մարզ, գ. Դիմիտրով, (094)730000, (093)991354, dimitrov-gyuxapetaran@mail.ru,

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 սեպտեմբերի 2018 թվականի N 29-Ն

### ԳՈՒՅՔ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը Դիմիտրովի համայնքապետարանի տնօրինության տակ գտնվող ՎԱՁ 21074 մակնիշի 063 LL 70 հաշվառման համարանիշի ծառայողական ավտոմեքենան օտարելու մասին, համայնքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել համայնքի ղեկավարին Հայաստանի հանրապետության Դիմիտրովի համայնքապետարանի տնօրինության տակ գտնվող ՎԱՁ-2107 մակնիշի, 063LL70 հաշվառման համարանիշի 2011 թվականի ծառայողական ավտոմեքենան օտարել դասական աճուրդով:

#### 1) Սահմանել՝

ա. <<Բիզնես էքսպերտ>> ՍՊԸ կողմից 2018 թվականի ապրիլի 4-ին իրական արժեքի վերազնահատման հաշվետվության համաձայն գնահատված գույքի արժեքը՝ 1328.0 հազար դրամ,

բ. գույքի վաճառքի մեկնարկային գինը՝ 1328.0 հազար դրամ,

#### 2) Դիմիտրով համայնքի ղեկավարին՝

ա. աճուրդի անցկացման օրվանից առնվազն մեկ ամիս առաջ մամուլում կամ զանգվածային լրատվության մյուս միջոցներով հրապարակել ընդհանուր տեղեկություններ գույքի, աճուրդի անցկացման պայմանների, ժամկետների, գույքի արժեքի որոշման հետ կապված վճարների, աճուրդի մասնակիցներին ներկայացվող պահանջների մասին.

բ. եռամսյա ժամկետում կազմակերպել աճուրդի անցկացումը.

գ. աճուրդի հաղթողի (այսուհետ՝ գնորդ) կողմից առաջարկված գնի արժեքի վճարումից հետո մեկամսյա ժամկետում գնորդի հետ կնքել առուվաճառքի

պայմանագիր՝ դրանում նախատեսելով, որ գնորդը պարտավորվում է իր միջոցների հաշվին վճարել ավելացված արժեքի հարկը, ինչպես նաև գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը՝ օրենքով սահմանված կարգով:

3) Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանել աճուրդով օտարման ենթակա գույքի մեկնարկային գնի 5 տոկոսի չափով: Գնորդի մուծած նախավճարը ներառել առաջարկվող գնի մեջ:

Կողմ -7

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ

*Կողմ Վահրժ*

ԻՎԱՆՆՈՎԱ ԱԻԴԱ

*Կողմ Վահրժ*

ԽԱԶԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

*Կողմ Վահրժ*

ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

*Կողմ Վահրժ*

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՅԱՆԵ

*Կողմ Վահրժ*

ՄԱՅԱԿԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ

*Կողմ Վահրժ*

ՍՈՒՄԲԱԹՅԱՆ ՆՎԱՐԴ

*Կողմ Վահրժ*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐՄԱՆ ԻՈՆԱՆՈՎ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ  
ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով համայնք  
ՀՀ Արարատի մարզ, գ. Դիմիտրով, (094)730000, (093)991354, dimitrov-gyuxapetaran@mail.ru,

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

26 սեպտեմբերի 2018թվականի N 30-Ն

**ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի N 35-Ն  
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Դիմիտրով համայնքում անասնապահությունը զարգացնելու և անասնաբուժական ծառայությունը պատշաճ մակարդակով մատուցելու նպատակով, համայնքի ղեկավարը առաջարկեց համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակում ավելացնել անասնաբույժի հաստիք: Առաջնորդվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետով և 33-րդ հոդվածով, համայնքի ավագանին որոշում է.

Դիմիտրով համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 5-ի «2017 թվականի համար Դիմիտրովի համայնքապետարանի աշխատակազմի, մշակույթի տան և մանկապարտեզի աշխատակիցների քանակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N35-Ն որոշման 1-ին կետով հաստատված թիվ 1 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

- 1-ին կետում «12» թվի փոխարեն կարդալ «13»;
- 2-րդ կետի «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ» բաժնում նոր տողով ավելացնել հաստիք՝ «Անասնաբույժ», հաստիքային միավոր՝ «0,5», պաշտոնային դրույքաչափ՝ «81000» դրամ:

Կողմ - 7

Դեմ - 0

Ձեռնպահ - 0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՇԵՆՈՒԿ

*Կողմ Շենուկ*

ԻՎԱՆՈՎԱ ԱՌԴԱ

*Կողմ Ասի*

ԽԱԶՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

*Կողմ Խաչ*

ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

*Կողմ Շենուկ*

ՄԿՐՏՅԱՆ ԳԱՅԱՆԵ

*Կողմ Խաչ*

ՄԱՅԱԿԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ

*Կողմ Շենուկ*

ՍՈՒՄԲԱԹՅԱՆ ՆՎԱՐԴ

*Կողմ Խաչ*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ  
ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով համայնք  
ՀՀ, Արարատի մարզ, գ. Դիմիտրով, (094)730000,(093)991354, dimitrov-gyuxapetaran@mail.ru.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

26 սեպտեմբերի 2018թվականի N 31

**ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Դիմիտրով համայնքի բնակիչ պահեստազորում գտնվող փոխգնդապետ Արման Յուրդաբեկի Մանուկյանը 20.09.2018 թվականին ներկայացրել է դիմում՝ OPEL ASTRA 1.6 մակնիշի 340D440 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի գույքահարկից ազատելու խնդրանքով: Դիմումին կից ներկայացված է Ռազմական ինստիտուտը ավարտելու դիպլոմի /A N 054215, տրված 10.07.1999թվականին/, զինվորական գրքույկի / OB N 001365, տրված 24.12.2015 թվականին/ և ավտոմեքենայի տեխնիկական անձնագրի /SB689695, տրված 29.10.2012 թվականին/ պատճենները: Ղեկավարվելով «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ կետով համայնքի ավագանին որոշում է.

Դիմիտրով համայնքի բնակիչ, պահեստազորում գտնվող փոխգնդապետ Արման Յուրդաբեկի Մանուկյանին /ՀՎՀՀ P0960066/ ազատել OPEL ASTRA 1.6 մակնիշի 340D440 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի 7500 դրամ գույքահարկից:

Կողմ -7

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ

*Կողմ Սեդրիկ*

ԻՎԱՆՈՎԱ ԱՌԴԱ

*Կողմ Մանուկ*

ԽԱԶԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

*Կողմ Իսկո*

ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

*Կողմ Շուշիկ*

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՅԱՆԵ

*Կողմ Մուսե*

ՄԱՅԱԿԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ

*Կողմ Սեդրիկ*

ՍՈՒՄԲԱԹՅԱՆ ՆՎԱՐԴ

*Կողմ*



**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

**ԱՐՄԱՆ ԻՈՆԱՆՈՎ**